ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 80-Ա

06 օգոստոսի 2018թ. գ.Գետահովիտ

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գետահովիտ համայնքի գյուղապետարան են դիմել Գետահովիտ գյուղի բնակիչներ Նարեկ Ներսեսի Օրդինյանը և Աննա Սամվելի Իսախանյանը Գետահովիտ գյուղի 15 փողոց, թիվ 18 հասցեում գտնվող իր սեփական տնամերձ 0.[illegible]հա հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված տունը `138.12քմ արտաքին մակերեսով օրինականացնելու խնդրանքով :

Նկատի ունենալով , որ Գետահովիտ գյուղի 15 փողոց, թիվ 18 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, կառուցված տունը Նարեկ Ներսեսի Օրդինյանի և Աննա Սամվելի Իսախանյանի կողմից կառուցվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում, համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի հատկանիշներին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք .

Ղեկավարվելով ՀՀ կառավարության `«ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» , 18 մայիսի 2006թ.–ի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Գետահովիտ գյուղի 15 փողոց, թիվ 18 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Նարեկ Ներսեսի Օրդինյանին և Աննա Սամվելի Իսախանյանին պատկանող թիվ 11-022-0021-0017 ծածկագրով, 0,1 հա մակերեսով հողամասում նրա կողմից ինքնակամ կառուցված բնակարանը՝138.12 քմ արտաքին մակերեսով՝ 1քմ-860 դրամ, որից 1-ին հարկը՝ 120.96քմ՝ 104.30 /հարյուր չորս հազար երեսուն/ ՀՀ դրամ, նկուղը՝ 17.16 քմ արտաքին մակերեսով 14760 /տասնչորս հազար յոթ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, ընդհանուր արժեքը ՝ 118800(հարյուր տասնութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ ճանաչել օրինական :

2.Կառուցապատողին առաջարկել սույն որոշումն ընդունելուց հետո 60-օրյա ժամկետում վճարել օրինականացման համար սահմանված վճարները, նրան նախազգուշացնելով նշված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում որոշումն ուժը կորցնելու մասին :

3. Որոշման մասին սահմանված կարգով իրազեկել Նարեկ Ներսեսի Օրդինյանին և Աննա Սամվելի Իսախանյանին :

4. Օրինականացման գումարի վճարման անդորագրերի առկայության դեպքում սույն որոշումն հիմք է իրավունքների պետական գրանցման համար :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Համայնքի ղեկավար՝ Ա. Ղազարյան

ԳԵՏԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ *07600465*